

ԵՎԿԼԻԳԵՍԻ «ՏԱՐԵՐՔ» ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՅՈՒ «ՔՆՆԻԿՈՆԻ»
ԵՐԿՐԱՉԱՓՈՒԹՅԱՆ ՄԱՍ

ԱՐՏԱՇԵՍ ՄԱԹԵՎՈՒՅԱՆ

Ձեռագրական նյութերի բնությամբ մեզ հաջողվեց ցույց տալ Անանիա Շիրակացու «Քննիկոնի» երկրաչափության բաժնի սահմանները և տարողությունը¹, որի մեջ իր տեղն ունենալով Եվկլիդեսի «Տարերքի» հայերեն թարգմանության հնագույն հատվածը, որը բանասիրության մեջ վերագրվում է մերթ Գրիգոր Մազիստրոսին, մերթ Շիրակացու ուսուցիչ Տյուբիկոսին, մերթ Անանիա Շիրակացուն: Քննենք Գրիգոր Մազիստրոսի վկայությունը Եվկլիդեսի երկի թարգմանության վերաբերյալ:

Անանի առաջնորդ Սարգիս վարդապետին ուղարկած մի նամակում Գրիգոր Մազիստրոսը հիշատակում է Եվկլիդեսի Երկրաչափությունը²: Նամակի ոչ ճիշտ ընկալման հետևանքով Եվկլիդեսի գործը համարվել է Գրիգոր Մազիստրոսի կատարած թարգմանություն³: Հետևաբար, ենթադրվել է նաև, որ սույն գործը XI դ. առաջ թարգմանություն չի ունեցել և հայ իրականության մեջ առաջին անգամ երևացել է այդ դարում⁴:

1884 թ. Ա. Սուբրյանը առաջին անգամ տպագրում է Եվկլիդեսի «Տարերքի» հայերեն թարգմանության բեկորը⁵: 1937 թ. Ն. Ակինյանը տարբեր ձևազրեքից հրատարակում է նույն բեկորը, համեմատում Եվկլիդեսի Երկրաչափության հունական վերակազմված բնագրի համապատասխան հատվածի հետ, բնութագրում է բնագրի լեզուն և թարգմանության հանգամանքները, ապա տալով նշված գործի նախասյուսումնությունը հայ մատենագրության մեջ, հանդում է մի շարք հետաքրքրական եզրակացությունների, ի թիվս դրանց այն, որ Եվկլիդեսի «Տարերքը» թարգմանված է 600 թ. հետո և VIII դ. առաջ, թարգմանիչը ենթադրվում է Անանիա Շիրակացու ուսուցիչ Տյուբիկոսը, որ թարգմանության լեզուն ավելի հին է և ընտիր, քան Գրիգոր Մազիստրոսի անհարթ լեզուն⁶:

1 Ա. Ս. Մաթևոսյան, Անանիա Շիրակացու «Քննիկոնի» երկրաչափության բաժնի (սՊատմա-բանասիրական հանդես, 1979, № 2), նույնի, Անանիա Շիրակացու «Աշխարհագրութեան» մի քանի հարցեր (սՊատմա-բանասիրական հանդես, 1979, № 9):

2 Գրիգոր Մազիստրոսի Քղթերը, Ալեքսանդրուպոլ, 1912, էջ 66:

3 Ս. Պրոնյան, Երկրաչափություն, Վենետիկ, 1794, էջ 19—20:

4 Ա. Գ. Արրա՛ամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը. ուսումնասիրություն, Երևան, 1944, էջ 25—27: Գ. Բ. Պետրոսյան, Մաթեմատիկա և հայաստանում հին և միջին դարերում, Երևան, 1959, էջ 101—105:

5 Ա. Սուբրյան, Նորագյուտ պատասխան ի գրոց աստեղացն Եվկլիդես Աղեքսանդրացո հին թարգմանությամբ նախնյաց, սՊատմա-բանասիրական հանդես, 1884, էջ 30:

6 Ն. Ակինյան, Եվկլիդեսի Տարերք երկրաչափության հայ մատենագրության մեջ, սՊատմա-բանասիրական հանդես, Վիեննա, 1937, էջ 225—242, Վերահրատարակվել է հետևյալ գրքում. «Եվկլիդեսի գիրք յազագս երկրաչափութեան», Վիեննա, 1959:

Այս հողվածում անընդունելի է այն, որ հեղինակը կամայականորեն վերադասավորում է Գրիգոր Մաղիստրոսի սույն նամակի մեզ հետաքրքրող հատվածը և դուրս նետում «սկսայ թարգմանել» բառերը, առանց որոնց անիմաստ է դառնում ողջ հատվածը: Այնինչ առանց այդպիսի վերադասավորման էլ հասկանալի է Գրիգոր Մաղիստրոսի նամակը, եթե ծանոթ է հեղինակի ինքնատիպ ու հոգնախրթին ոճը:

Ն. Ակինյանի տեսության դեմ հանդես է գալիս Ա. Արրահամյանը և գտնում, որ Երկրաչափությունը Գրիգոր Մաղիստրոսի թարգմանությունն է և ոչ թե Տյուրիկոսի կամ Անանիա Շիրակացու: «Անհիմն է Ն. Ակինյանի մյուս պնդումը ևս, — գրում է նա, — որ իբր Մաղիստրոսի լեզուն տարբերվում է էվկլիդեսի Երկրաչափության թարգմանության լեզվից: Էվկլիդեսի Երկրաչափության լեզուն, մեր կարծիքով, ընդհակառակը, շատ ծանր լեզու է և ամենևին նման չէ Շիրակացու լեզվին: Շիրակացին երբեք չի ասի. «...թէ յաւելու ի հաւասար այլ ևս հաւասարս, լինին՝ ամենայնքն հաւասար: Եւ թէ պակասելի հաւասարէն հաւասարս որ մնայ հաւասարք են: Եւ թէ յաւելու ի վերայ անհաւասարին հաւասար, լինին ամենայնքն անհաւասար...»: Այս ոչ թե Շիրակացու, այլ Մաղիստրոսի սովորական խրթնարան լեզուն է»⁷. Նշված հատվածը, սակայն, իրականում այսպիսին է.

«Իբր, որ հաւասար են միում իրի՝ ինքեանք հաւասար են միմեանց: Եւ թէ յաւելու ի հաւասարսն այլ ևս հաւասարս լինին ամենայնքն հաւասարք: Եւ թէ պակասէ ի հաւասարէն հաւասար, որ մնայ՝ հաւասարք են: Եւ թէ յաւելու ի վերայ անհաւասարին հաւասար լինին ամենայնքն անհաւասարք»⁸.

Եվ իրավացի է Ն. Ակինյանը, որ գտնում է, թե, եթե այսօր էլ թարգմանենք, այդպես կթարգմանենք:

Ի դեպ այս նույն հատվածը համեմատելով հունարեն համապատասխան հատվածի հետ, Ա. Առաքելյանը գրում է. «Թարգմանության լեզուն պարզ է և գերծ այն խրթին ճոռոմաբանությունից, որ հատուկ է Գրիգոր Մաղիստրոսին»⁹:

1956 թ. Ն. Ակինյանը վերստին ներկայացնում է Գրիգոր Մաղիստրոսի՝ Մարդիս վարդապետին ուղարկած նամակի մեզ հետաքրքրող հատվածի բնական շարադրանքը և ճիշտ ընթերցումը, ապա առարկում Ա. Արրահամյանին¹⁰: Գ. Պետրոսյանը անտեսում է այս ճիշտ ընթերցումը և, հենվելով Ա. Արրահամյանի տեսակետի վրա, գտնում է, որ «Էվկլիդեսի Երկրաչափության թարգմանիչը հանդիսանում է Գրիգոր Մաղիստրոսը» և այդ երկը հրատարակում է որպես նրա թարգմանություն¹¹:

Ա. Արրահամյանը և Գ. Պետրոսյանը այս տեսակետը պաշտպանում են

7 Ա. Գ. Արրահամյան, նշվ. աշխ., էջ 76:

8 Ն. Ակինյան, նշվ. աշխ., էջ 25:

9 Ա. Գ. Առաքելյան, Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն, Կ. Ա. Երևան, 1959, էջ 518:

10 Ն. Ակինյան, Գարձայ Էվկլիդես Տարերք Երկրաչափության (Էվկլիդեսի գիրք յառուգա Երկրաչափութեան», էջ 30—42):

11 Գ. Պ. Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 101—126:

նաև Ծվկլիդեսի Երկրաչափության հայերեն նորահայտ թարգմանության համատեղ հրատարակության առաջարկում¹²,

Այժմ բերենք Գրիգոր Մագիստրոսի Սևանի առաջնորդ Սարգիս վարդապետին դրած նամակի մեզ հետաքրքրող հատվածի ընթերցումը: Մինչ այդ նկատենք, որ Գրիգոր Մագիստրոսը հայ դպրության մեջ հայտնի է որպես ծանրաճ, խրթնաբան հեղինակ, որի կազմած նախադասությունները բաղմաստիճան են և հոգնահանգույց, որոնց սովորական ընթերցումը դժվարացնում է բովանդակության ճիշտ ընկալումը, և ն. Ակիլյանի կողմից այդ հատվածի վերագրասավորումը միայն ձգտումն էր այն հասկանալու¹³, Բերենք այդ նամակի մեզ անհրաժեշտ հատվածը.

«... վասն զի ոչ եմք բրբէք դադարեալ ի թարգմանութենէ ևս. բազում մատեալս. զորս ոչ եմք գտեալ ի մեր լեզուս՝ զերկուս մատեանսն Պղատոնի, զՏիմէոսի տրամարանութեանն և զՓեդոլնի, յորս բոլոր ճառսն նախագիտականին այն պարփակեալ կայ, և զայս բազումս յիմաստասիրացն. իւրաքանչիւր մատեանքս այս մեծագոյն է քան զտարևոր Տօնականս. բայց և գտեալ մեր իսկ ի հայ լեզու դրեալ թարգմանչացն՝ զգիրս Ողոմպիոզորոսի, զոր Դաւիթ յիշատակէ, կարի յոյժ սքանչելի և հրաշալի բանաստեղծութիւնս մակաւասար բոլոր իմաստասիրական բանից. գտեալ եմ և զԿալիմաքոսի և զԱնդոնիկէայն ի հայ լեզու, բայց և զԵրկրաչափականն զԵւկլիդոսին. սկսալ բարգմանել, և եթէ տակաին կամեսցի ՏԼԵ Երկարանալ մեզ ի կենցաղումս, բազում հոգս յանձին կաւեալ զմնացեալսն բոլոր Յունաց և Ասորոց բարգմանել ոչ դանդաղեցայց»¹⁴:

¹² «Երկրաչափութիւն Եւկլիդեսի», տեքստը հրատարակության պատրաստեցին Է. Բ. Պետրոսյանը և Ա. Գ. Արրահամյանը, Երևան, 1962, էջ 6—7:

¹³ Նախ բերենք այդ կարգի մի այլ օրինակ նույն Գրիգոր Մագիստրոսից. այդ հատվածի սովորական ընթերցումը ավելի քան ինը հարյուրամյակ չէր ընկալվել. սույն պատճառով բանասիրությանը անհայտ էր մնացել Անանիա Շիրակացու «Քննիկոնը»:

«Առ տէր Պետրոս... և հարցումն Անանիայի գրոց Շիրակայեոյն, զոր Մեծ Քննիկոնն անուանեն:

... Փսխան Յիսուսի... որ ոչ Երբէք դանդաղիս զգիրս Անանիայի Շիրակայեոյ. որ բազում աշխատութեամբ և յածաշու խոնջմամբ հաւաքեալ ի բազմազան և յոքնարեղուն մատենից. յորում և ենթակայացեալ են ոչ միայն քառիցն արձեստք, այլ բոլոր նախնայն խոկմունս, որ են այժմ ի տան տիրունեան, զոր նախքան զքեզ խրթնացեալ և թագնի ընդ գրուանաւ ծածկէին. զոր և ինքն իսկ, որ մատենագրեաց զայդոսիկ՝ յառաջնում իւրոյ տրամարանութեան բազում տարակուսանս և կեղերջականս սակս մերոյ ազգային անփոյթ առնելոյ զայդպիսի գործանութիւնս. յորում մքերեալ են տոգորք աստուածային և ենթալայացեալ ամենայն արհեստի մակացութեան. և նախադասեալ է յուսկանութեանն և Երաժշտականութեանն... իսկ Երկրաչափութեանն և աստղաբաշխութեանն...» («Գրիգոր Մագիստրոսի Քղթերք», էջ 5):

Այն նախադասությունները, որ տեղավորված են ընդգծված տողերի միջև, կարևոր են և բացահայտում են «Քննիկոնի» պատմությունը և նրա հետ կապված այլ հարցեր, որոնք կարող էին նաև հիմնական միտքն արտահայտող նախադասությունից հետո լինել, կամ մնալ տեղում՝ փակագծերով և համապատասխան կետադրությամբ սահմանազատված: Այդ բանը հետոմ հնարավոր չէր, մասնավորապես որ արտագրող գրիչները միշտ չէ. որ հմուտ էին արվեստին: Սակայն, որովհետև հիմնական միտքն արտահայտող գլխավոր նախադասության (կարգաընդգծվածը) երկու մասերը բավականին որոշակի են և չեն ձուլվում երկրորդական նախադասություններից որեւէ մեկին, ինչպես Սարգիս վարդապետին ուշղած նամակն է, այդ նախադասություններն այս կոնտեքստում հասկանալի են:

¹⁴ «Գրիգոր Մագիստրոսի Քղթերք», էջ 66:

Այստեղ հիմնական միտքը (զլխավոր նախադասությունը), որ Գրիգոր Մաղիստրոսը հաղորդել է կամենում, մեր ընդգծված տողերն են՝ «...բազում մատեանս զորս ոչ եմք գտեալ ի մեր լեզու... սկսայ բարգմանել, և երե տակաւին...» և այլն:

Միջանկյալ բաղձաստիճան նախադասությունները, որոնք կարելի է առնել մի բանի փակագծի մեջ, բաժանվում են երկու խմբի. առաջինում քվարկվում են այն գործերը, որոնք հայերենի շեն թարգմանված. դրանք են. «դերկուս մատեանսն Պղատոնի, զՏիմէոսի տլւսամաբանութեանն և զՓեղոփնի... և զայս բազումս յիմաստասիրացն»: Երկրորդ խումբը թարգմանված էն հայերենի. դրանք են «զգիրս Ողոմպիոզորոսի... և զԿալիմաքոսի և զԱնգոսնիկեայն... բայց և զԵրկրաշափականն զԵկկիդոսին»: Սակայն ինչու վերջինս հիշելիս գրում է. «բայց և»: Մեր կարծիքով այստեղ Գրիգոր Մաղիստրոսը այն առանձնացնում է նախորդ երեքից, որովհետև նրանք թարգմանվել են «ի հայ լեզու գրեալ թարգմանչացն», իսկ «զԵրկրաշափական զԵկկիդոսին» Գրիգոր Մաղիստրոսը գտել է Անանիա Շիրակացու «Քննիկոնի» մեջ, այսինքն այն «թարգմանչացն գրեալ» չէր, այլ Անանիա Շիրակացու թարգմանությունն էր: Ուրիշ կերպ էլ չէր լինի: Գրիգոր Մաղիստրոսը երբ գրում էր այս նամակը, դրանից տասնամյակներ առաջ նրան ծանոթ էր «Քննիկոնը», որի մեջ Երկրաշափությունը մի ամբողջ բաժին էր՝ Եկկիդոսից հատվածով մեջ մասին չէր կարող շիմանալ նաև Սարգիս վարդապետը: Ուստի իր գտած նորագյուտ հայերեն թարգմանությունների կողքին, որպես արդեն երկուսի համար հայտնի փաստ, նա «բայց և» կապակցությամբ արձանագրում է Եկկիդոսի Երկրաշափության «ի հայ լեզու» թարգմանված լինելու պարագան:

Այս բոլորը ցույց են տալիս, որ Եկկիդոսի Երկրաշափության թարգմանիչը Գրիգոր Մաղիստրոսը չէ, և որ վերջինիս այն հայտնի էր Անանիա Շիրակացու «Քննիկոնի» «Երկրաշափականն» բաժնից: Ամենայն հավանականությամբ, Գրիգոր Մաղիստրոսի վկայած այդ հատվածն է, որ մեկ է հավել և գտնվում է հայերեն երկու խումբ ձեռագրերի մեջ¹⁵:

Առարկելով Ա. Աբրահամյանին և կրկին անդրադառնալով Եկկիդոսի «Տարերքի» թարգմանչին, Ն. Ակինյանը գրում է. «Ես ենթադրաբար Երկրաշափության թարգմանիչ համարած էի հայերենագետ հույն Տյուբիկոսը և ոչ Անանիա Շիրակացին: Վերջինս չէր կրնար թարգմանիչ ներկայանալ, այնու որ դիամետրոս terminus technicus ան հայացուցած է տրամաչափ, տրամաչափական, հետևելով Հունաբան դպրոցի երկրորդ դասի ձևած բառակերտություններուն...»

Եթե Երկրաշափութեանս 165 տողերը լեզվի և արվեստի տեսակետների բնության առնենք, պիտի տեսնենք հոն փափուկ, դասական հայերենի նմանության ձգտող լեզու մը և հունարեն բնագրի ազատ, դյուրիմաց թարգմանություն մը»¹⁶: Կասկածելով, որ որոշ հունարան բառեր կարող են հետազայում մուծված լինել բնագրում, Ն. Ակինյանը պրում է. «Եթե մեր այս ենթադրությունը ստուգվի նորագյուտ ձեռագրով մը, կարող ենք Երկրաշափությանս թարգմանիչը նույնացնել այն թարգմանիչին չես, որ թարգմա

15 Ա. Ս. Մաթևոսյան, նշվ. աշխ.:

16 Ն. Ակինյան, նշվ. աշխ., էջ 35—36:

նած է Պտղոմեոս — Պապոսի Աշխարհագիրը, հավանորեն Ե դարու երրորդ չափորդին: Նկատի պետք է առնել, որ Պապոս իր գործի մեջ առած էր նաև Եվկլիդեսի Երկրաչափության մի մասը: Ինչպես Աշխարհագիրն ետ ժամանակի տեսած է խմբագրություն (Անանիա Շիրակացիին), նույնպես Երկրաչափությունն կրած է շարափոխություններ»¹⁷:

Այստեղ հետաքրքրականն այն է, որ Ն. Ակինյանը, որ այնքան հանգամանորեն քննել է Եվկլիդեսի «Տուրբուրի» հայերեն թարգմանության և «Աշխարհագրության» լեզուն, որոշ վերապահումներով, թարգմանիչների նույնություն է տեսնում: Անանիա Շիրակացին հունական շատ լուրջ կրթություն էր ստացել և մասնագիտական նյութեր (տվյալ դեպքում՝ Եվկլիդեսի Երկրաչափությունը) թարգմանելիս կարող էր որոշ քաններում հետևել հունարեններին, որոնց ներկայացուցիչներից մեծագույնին՝ Դավիթ Անհաղթին հետևում էր: Դավիթ Անհաղթի իմաստասիրության տեսականի գործնական արտահայտությունն էր Անանիա Շիրակացու «Քննիկոնը», գումարած՝ վերջինիս անհատականությունը և իրագործելու հնարավորությունը:

Երկրորդ արժեքավոր նկատողությունն այն էր, որ Պապոս Աղեքսանդրացու Երկրագործության մեջ ղետեղված է եղել Եվկլիդեսի Երկրաչափության մի մասը: Պապոսի երկր Քննիկոնի Երկրաչափության բաժնի մեջ ղեռը Անանիա Շիրակացին այնտեղ պետք է դնել նաև Եվկլիդեսի Երկրաչափությունից անհրաժեշտ հատվածը: Իսկ հայերեն թարգմանված հատվածը հենց այդ անհրաժեշտ հատվածն էր, ինչպես երևում է Երկրաչափության նախագիտելիքից կամ ներածությունից:

«Հարց. 11 րբ են երկրաչափութիւնք»:

Այս բնական հարցադրումը մենք նկատում ենք Անանիա Շիրակացու «Քննիկոնի» բոլոր բաժինների սկզբում: Այսպես. «Ձինչ է թուականութիւնն», «Ձինչ է երաժշտականութիւնն», «Ձի՛նչ է տոմար», կամ «Ձի՛նչ է աստեղաբաշխութիւն» և սկսում է շարադրել հարցի պատասխանը: Երկրաչափության ինչ լինելու պատասխանը սկսվում է Դավիթ Անհաղթի «Սահմանքի» երկրաչափության ծաղման մասին հատվածով:

«Պատասխանի — Երկրաչափութիւնը գոր յեղիպտացոցն գտեալ ևղև վասն արտավարութեան հարկկեայ, քան զի նեղու գետոյ ի ծովանալ ի վերա Եղիպտոսի և խառնակել զսահմանս արտավարացն կոիւք և սպանմունք»¹⁸ լինէին Եղիպտացոցն ի վերա իւրաքանչիւր սահմանի, մինչ իմացան շափ մի, որում անուն է սպանակ. զայն ղնելով գտանէին զսահմանս իւրաքանչիւր արտավարաց, քանզի զայ երկրաչափ և շափէ կանկունաւ զօսւանին, որ ի ձեռն ի վեր անշարժ շարունակի երկրին զշափ արտորէից, անշաստանաց...»¹⁹:

17 Նույն տեղում, էջ 38:

18 Ձեռագրում՝ «զբաղմունք»:

19 Մատենադարան, ձեռ. № 6686, էջ 3ա: Սույն հատվածը տպագրված է հետևյալ ձևով: «Իսկ զերկրաչափականն եղիպտացիք գտին ի հարկկ. քանզի նեղու գետոյ ի ծովանալ ի վերայ Եղիպտոսի և խառնակել զսահմանս արտավարացն կոիւք և սպանմունք լինէին եղիպտացոցն ի վերայ իւրաքանչիւր սահմանի, մինչև իմացան շափ մի, որում անուն էր սպանակ. զայն ղնելով գտանէին զսահմանս իւրաքանչիւր արտավարի, ուստի և ապա երկրաչափութիւն գտաւ» (Դավիթ Անհաղթ, Սահմանք իմաստասիրութեան, համահավաք քննական բնագիր Ս. Ս. Արևշատյանի, Երևան, 1960, էջ 132):

Արտը շափելու անհրաժեշտությունը բացատրելուց հետո, Անանիա Շիրակացին գրում է. «Այնպէս շափէ երկրաշափականն արհեստին, զի մի մոթու տեղն ոչ աւելու և ոչ նուազէ: Եւ այս մեծ է»: Ապա անցնում է այգեգործությանը. «Առնպէս և այգեգործքն առնեն, յորժամ կամին որ տունկս տնկիլ ի դաշտային տեղիս և գայ երկրաշափ...»: Եվ երկրաշափությունը կատարում է իր յրաշք գործը՝ երկրաշափի միջոցով. «Եւ գայ այգեգործն և յուր ցիցք են՝ յանտ խոր է, զնէ զտունկն, և ոչ լինի մինն մօտ և մինն հեռի, այլ հաւասար, միաշափ, երևի իբրև զլարս ամենայն կողմանց և իբրև զշարս մարդարտաց»: Ապա թվարկում է նաև երկրաշափության անհրաժեշտության այլևայլ բնագավառներ. «Եւ այլ ազգի ազգի շափս և կոպարս, և սահման գաւառաց և գիւղից, և այլ երկրաշափութիւնս ի շինութիւն քաղաքաց, պարսպաց և տանց: Այլ և ի շաւիղս ջուրց, այսինքն ճանապարհս և ի գնացս ջուրց շափելով և կշռով բարձրացուցանեն և ցածուցանեն և տանեն ի տեղոջէ ի տեղիս»:

Դարձեալ և այլ երկրաշափութիւն...»²⁰ և այլն:

Հիրավի անսահմանափակ օգտակար գիտություն, որը իմանալու համար պետք է հմտանալ նրա մեջ: Իսկ այդ հնարավորությունը ընձեռում է Եվկլիդեսի «Տարերբը», որն սկսվում է կետից ու գծից: Ուստի սրան հետևել է «Եվկլիդեսյ վասն Տարերաց Երկրաշափութեան» հատվածը «Կէտ իր իմն է որ ոչ ունի մասն»:

Իսկ գիծ է երկայնութիւն առանց լայնութեան և բովանդակութիւն իւր Երկուս կէտս:

Եւ ուղիղ գիծ է եղեալ ի դիմաց կէտիցն, որ կան ի վերա նորա ընդդէմ միմեանց:

Կամ գիծ է կարճ գիծն ի մէջ Բ կետից, և պարզ է որ ունի երկայնութիւն միայն...»²¹:

Ամբողջական է պահպանվել Եվկլիդեսի «Տարերբի» Անանիա Շիրակացու թարգմանությունը, թե՛ ոչ՝ հայտնի չէ: Ամբողջական է, արդյոք, երկրաշափության նախագիտելիքը սույն ձևաչափում, որից առայժմ մի օրինակ միայն ունենք. այդ ևս հայտնի չէ: Այսուհանդերձ, մենք ձևաչափերի ընձեռած հնարավորություններն օգտագործելով, կարող ենք «Քննիկոնի» Երկրաշափության բաժինը առայժմ ներկայացնել վերոբնեյալ նյութերի այսպիսի հերթականությամբ.

ա. Ո՞րք են երկրաշափութիւնը (նախագիտելիք), բ. Եվկլիդեսյ Տարերբ Երկրաշափութեան, գ. Պատմութիւնը խաւսից, դ. Ամենայն տիեզերք («Աշխարհագրութիւն»), ե. Մղոնաշափը (Վասն Երկրաշափութեան), զ. Վասն նաւարկութեան և ծովուց ճանապարհի, է. Աստեղագաղափարական երկրաշափութիւն:

Ներկայացված նյութերի մի մասը՝ անշուշտ, Անանիա Շիրակացու թարգմանություններն են, մյուս մասը՝ նրա ստեղծագործությունները, որոնց մեջ օգտագործել է հայ և հույն հեղինակների ժառանգությունը: Անանիա Շիրակացին հայ մատենագիրներից, հատկապես Մովսես Խորենացուց և Դավիթ Անհաղթից, հատվածներ է բերում և շի նշում աղբյուրները, հավանաբար այն պատճառով, որ «Քննիկոնը» ուսումնասիրող աշակերտները համարյա

20 Մատենադարան, ձեռ. № 6682, էջ 3ա—4ա:

21 Մատենադարան, ձեռ. № 4166, էջ 216ա:

անգիր պիտի իմանալին արդեն նշված հեղինակներին, ինչպես Սուրբ գիրքը, որից բերված քաղվածքները նույնպես չեն նշված, թե որ գրքից են:

Ամփոփենք. Անանիա Շիրակացին «Քննիկոնի» «Երկրաչափություն» առարկան շարադրելիս ելակետ է ունեցել քառյակ արվեստների համապատասխան բաժնի սահմանները, սակայն ներկայացրել է ավելի հարուստ և քաղմագան բուսանդակությամբ, ավելացնելով հայրենի դպրությանը հույս ողտակար գիտելիքներ և անհրաժեշտ գիտական նյութ, որոնք պետք է նպաստեին Հայաստան երկիրը լուսավորելուն: Երկրաչափությունը պետք է օգտակար լիներ երկրագործին և այգեգործին, ճարտարապետին և շինարարին, ճանապարհորդին և առևտրականին, սովորողին և սովորեցնողին: Տիեզերքի, աշխարհի մասին տեղեկություններ հաղորդելուց ավելի գիտելիքներ պետք է տար ուրիշ ցեղերի ու լիզուների շարքում՝ հալերի երկրի, մայրենի լեզվի ու դպրության մասին, հայրենի բնաշխարհի, նրա հարստությունների, նահանգների, քաղաքների, բերդերի, գետերի, հարազատ վայրերը իրար և հարևան երկրներին կապող ճանապարհների մասին: Այդ պատճառով Անանիա Շիրակացին, մեծ հայրենասերն ու զիտնականը, օգտագործելով գիտելիքների իր հստակապաշարն ու երիտասարդական եռանդը, ձեռքի աակ ունենալով հայ և օտար աստիճանադասողականություն, Մովսես Խորենացու Հայոց պատմությունը, Դավիթ Անհաղթի Սահմանք իմաստասիրության, Հրսիկոնոս Բոսատրացու Սննդոց գիրքը, Եվկլիդեսի Տարեբքը, Կղավդիոս Կողոմենոսի Աշխարհագրության ձևնարկը, Պապոս Աղեբսանդրացու Երկրաչափությունը, Արիստոտելին վերագրվող Աշխարհի պատմությունը, Կոստանզին Անտիոքացու Քրիստոնեական տեղագրությունը և այլն, ինչպես նաև Հայոց կաթողիկոսարանի դիվանի ու տեղի Մատենադարանի անհրաժեշտ նյութերը և վերօպիս Անաստաս կաթողիկոսի հովանավորությունն ու շահագրգռվածությունը, ստեղծեց իր հոգնաբեղուն «Քննիկոնի» քաղմագրական «Երկրաչափությունը», որը հայ միջնադարում կատարելով անդնահատի, ծառայություն դաստիարակության, գիտության տարածման ու արմատացման բնագավառում, այսօր էլ մեզ հասած հատվածներով պահում է իր հայագիտական և համաշխարհային գիտական նշանակությունն ու արժեքը:

«ЭЛЕМЕНТЫ» ЭВКЛИДА—ЧАСТЬ РАЗДЕЛА «ГЕОМЕТРИЯ»
«КНИЖКОНА» АНАНИИ ШИРАКАЦИ

АРТАШЕС МАТЕВОСЯН

Резюме

Анания Ширакаци в разделе «Геометрия» своего известного труда «Книжкон» поместил также труд Эвклида—«Элементы». В арменоведении перевод «Элементов» Эвклида приписывался то Григору Магистросу, то Анании Ширакаци. Сопоставительный анализ письменных источников показывает, что перевод вышеуказанного труда Эвклида был осуществлен именно Ананией Ширакаци и включен им в один из разделов «Книжкона».